№ 92 Մայիսի 23 (Յունիսի 4) 1881 Մայիսի 23 (Յունիսի 4) № 92

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբաղաքացիք գիրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Էջմիածնի մասին։ Ներքին լուրեր։ — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Գերմանիա։ — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Այվազովսկու պատկերների հանդիսի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՍԻՆ

—

Էջմիածնայ և արդի Ընդհանրական Ս. Կաթողիկոսին կացութեանն ու վիճակին վրայ յաճախ գրած, ուշադրութիւն հրաւիրած, դեղն ու դարմանն առաջարկած և Վեհ. Ս. Կաթողիկոսին ազգասիրութեանը դիմած եմք՝ խնդրելով և պահանջելով որ ազգային ընդհանուր դժգոհութեան և գանգատանաց առիթ ընծայող պատճառները բարձուին և առաջքն առնուին այն տխուր հետևանաց՝ զորս կրնայ նախատեսել ամեն անձ՝ որ քիչ շատ խորհելու և դատելու կարողութիւն ունի։

Ազգային մամուլն առհասարակ՝ Մշակ, Մեղու-Հայաստանի, Փորձ, Մասիս, Արևելեան Մամուլ և Լոյս յիշեալ ընդհանուր դժգոհութեան և գանգատանաց նկատմամբ շատ բան գրած և լուրջ ու կարևոր խորհրդածութիւններ հրատարակած են, և թէպէտ, ցաւալի է ըսել՝ այդ ամենը մեր ընդհանրական Վեհ. Կաթողիկոսին «ոչ կարիմք»-ին առջև առանց ազդեցութեան մնացած են, սակայն հասարակաց կարծեացն առջև «Ձայն բարբառոյ յանապատի» դարձած չեն։

Այժմ կրնամք հաւատի կերպիւ ըսել թէ նոյն ընդհանուր դժգոհութիւնն ու գանգատները իրենց վերջին աստիճանին հասած են շնորհիւ Մանկունի եպիսկոպոսին յամառ ընթացիգ և խաղացած դերերուն՝ որոց չափն ու ստհմանն անցած է, և չը կայ Հայ մը՝ ճշմարիտ Հայ մը որ խորին ցաւ ու մեծ վիշտ չը զգայ և նորա սիրտն արդար զայրոյթով չը լցուի, չը զգածուի և չը-սէ, Աստուա՛ծ իմ, ինչ օրերու եմք հասեր, դեռ ինչե՛ր պիտի լսեմք արդեօք, ո՛ւր է իշեր մեր Ընդհանրական Կաթողիկոսութեան վիճակն և ի՛նչեր արդեօք պիտի գործեն տակաւին. . . .

Ազգային շահուց թշնամի անձինք թո՛ղ որչափ կուզեն խունկ ու բուրվառ ծխեն Մանկունի եպիսկոպոսի առաջ, թո՛ղ որչափ կուզեն սրբացնեն ու պանծացնեն նորա անունն և թո՛ղ որչափ կրնան չքմեղ հանել Ջանան արդի Վեհ. Ս. Կաթողիկոսն, որոյ օրով՝ ցաւալի է ըսել, ընդհանրական Կաթողիկոսութեան շուքն ու անունը նսեմացած, նորա ազդեցութիւնը տկարացած, և, ներուի մեզ ըսել՝ քարգայթակղութեան դարձած է. . . .

Միայն մեք չեմք որ այսպէս կը դատեմք ու կը խորհրդածեմք, այլ համայն թուրքիոյ Հայն ալ, Ռուսահայն ալ, Հնդկահայն ալ և Պարսկահայն ալ այսպէս կը դատէ, այսպէս կը խորհրդածէ, և մի և նոյն զգացումները կը տածէ ամեն Հայ, զի ճշմարիտ Հայու մը զգացումներն այսպիսի յոյժ կարեւոր խնդրոյ մը առջև ի հարկէ չը կրնար տարբեր լինիլ, ի բաց առեալ այն մի քանի անձինքն՝ որ անարդ շահախնդրութեան համար ամեն բան զոհ կուտան, լոյսը կը ատեն, խաւարը կը պաշտեն, առաքինութեան առջև խուլ և համր կը հանդիսանան, մոլութեան կուռքին առջև 'ի ծունր կիջնեն և ո՛ւր որ անիրաւ մամոնայի անունը կայ, հոդով մարմնով անդ են և նոյն ժամանակ անդադար զարգացնելով իր բնածին տաղանդը, երկարառև գործունէութիւնից յետոյ, հասցնէր զրան այսպիսի փառահեղ կատարելագործութեան։

Այդ զարմանալի հանճարի այժը, որ համեմատաբար նրա վաղեմի արժանաւորութեանց հետ, չէ սպառվում, այլ ընդհակառակն, ևս առաւել շարունակվում է աճել, ստեղծելով իր պատկառելի հասակում նոր իմն բաներ, արդարև, անօրինակ է։ Այվազեանի վերջին աշխարհահանդէսը ցոյց տուեց մեզ, որ ճշմարիտ տաղանդի համար սահման չէ սրոշված. գրեթէ բոլոր պատկերները գրված են այնպիսի ճարպիկութեամբ, շատերի վրա մշակված են այնպիսի նուրբ և վսեմ շարժառիթներ, որոնց նմանը մինչև այժմ դեռ չէր նշմարվում նրա առաջվայ պատկերների վրա։ Բայց կատաւի վրա նկարելու համար ծովը, օդը և առհասարակ լոյսը, սրա պէսպէս փոփոխութիւններով հանդերձ այն կատարելութեամբ, ինչպէս արել է Այվազեանը, հերիք չէ միայն տաղանդ ունենալը, այլ հարկաւոր է նաև գերագոյն արուեստականութիւն (техника), որ մատչելի է լինում մարդուս միայն ամենադառն և տաժանելի աշխատութիւններից և այն էլ ոչ միշտ։

Ճշմարիտ է Այվազեանը չէ ուսումնասիրում բնութիւնը առանձին էսքիզներով և ոչ էլ լոկ արտագրում է այն. նրա աշխատութեան գլխաւոր արժանաւորութիւնը դրա ներքին յատկութիւնն է։ Իբրև բանաստեղծ բառիս բուն նշանակութեամբ, մեր երևելի նկարիչը կենդանագրում է բնութեան զմայլեցուցիչ գեղեցկութիւնը, զի այդպիսեաց բառարանին մէջ ճշմարիտ ազգասիրութիւնն ի բ օ փ ի, անկեղծութիւնը՝ ցնորք, առաքինութիւնն՝ ստուեր, բարիկամեցողութիւնը՝ տկարամտութիւն և ազգային գործոց մէջ անշահախնդրութիւնն՝ յիմարութիւն կը նշանակէ, և սակայն այդ կարգի անձինք են ընդհանրապէս որ անամոթաբար ձայն ու աղաղակ կը բառնան, արդարութեան և ճշմարտութեան դէմ ոգւով չափ կը մարմնչին, վատաբար անձնականութեան դէմ կը յարձակին, անշահախնդրութեան և անկեղծութեան դիմակի ներքև ամեն կերպ չարիք գործելու կը ժպրտին, ժողովրդականութեան կեղծ անունի տակ ազգային կենսական շահեր կը վտանգեն, և ահա այդ կարգի անձանց ատուածը ոսկին և դարձեալ ոսկին է։

Շատ չեմք ուզեր այդ կարգի անձանց հետ խաղալ, որք թէպէտ մութի մէջ կը գործեն, այլ ժամանակն ամեն բան կը յայտնէ, զի, ինչպէս յայտնի է, արդարութիւնն տգան կամ անագան կը յայտնուի, ստութիւնն ու կեղծաւորութիւնը կը խայտառակի և վատն ու վատութիւնը կը ճանաչցուի, որովհետև արդարութիւնը չը յաղթահարիր և որովհետև արդարութիւնն անկման և անդրադարձութեան անկիւններ ունի։

Անցնիմք մեր նիւթին և բացատրեմք թէ ի՞նչ է մեր այս յօդուածին շարժառիթը։

Մեր այս յօդուածին շարժառիթը Մասիսի երեքշաբթի աւուր թուովն հրատարակուած մի տեղեկութիւն է, որ Մանկունի եպիսկոպոսին մի նոր շահատակութիւնը կը ծանուցանէ։

Մանկունի եպիսկոպոսին նկատմամբ սոյն ըսուածներն ոչ զարմանալի կը թուին և ոչ տարօրինակ բաներ են, ուշադիր ընթերցողք կը յիշեն հարկաւ թէ Էջմիածնայ թեմերուն առանց առաջնորդի մնալուն և առաջնորդական հասոյթներն ուղղակի Էջմիածին պահանջուելուն համար ասկէ առաջ քանիցս հրատարակութիւններ ըրած և առաջնորդական խնդրոյն կարևորութիւնն և ժողովուրդն առանց առաջնորդի թողելուն վնասակար հետևանքները բացատրելով՝ Ն. Վեհ. Սրբազնութեան ուշադրութիւնն հրաւիրած էինք, յուսալով թէ իբրև հայր հասարակաց Ն. Ս. Օծութիւնը կը բարեհաճի այս մասին պարտ ու պատշաճն ի գործ դնել և հետևաբար ընդհանուր դժգոհութեան և գանգատանաց դէթ մասամբ առաջքն առնուլ։

Ցաւալի է սակայն որ անշուշտ Մանկունի եպիսկոպոսին հնարքներուն ազդեցութեան շնորհիւ ուշադրութիւն չը դարձուց Վեհ. Ս. Հայրապետն, և տա՛ հրաց վիճակը սոյն տխուր հետևանաց յանդեցաւ ի մեծ ցաւ ճշմարիտ ազգասիրաց, և չը գիտեմք տակաւին թէ գործոց եզրակացութիւնն ո՛ւր պիտի յանգի, բայց սա ստոյգ է և ճշմարիտ թէ Մանկունի եպիսկոպոսը շատ դիւրաւ պիտի չը կրնայ Պոլիս չու�լը, մինչև որ Էջմիածնայ հաշիւներն ամբողջովին չը կարգադրին օրինաւոր կերպիւ։

Մասիսի հետևեալ դիտողութիւնը մենք ևս խիստ արդար և իրաւացի կը գտնեմք, և կը զարմանանք թէ Ազգ. ժողովն ինչո՞ւ մինչև հիմայ իւր ձայնը չը բարձրացուց։

Մասիս իրաւամբ կըսէ „Ըստ մեզ՝ Կ. Պոլսոյ Ազգ. Վարչութեան և մանաւանդ Ս. Պատրիարքին անհրաժեշտ պարտաւորութիւնն է՝ ապահով միջոցներով ստուգել այս տխուր կացութիւնն, և ընդհանուր ազգին ուշադրութիւն հրաւիրել Վեհ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Յ. Կ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԻ ՄԱՍԻՆ

—

Երկու շաբաթ դրանից առաջ ռուս լրագիրներում ես մի յայտարարութիւն կարդացի թէ՝ Ս. Պետերբուրգի բնակիչ պ. Լ. Մազիրեանցը ձեռնամուխ է եղել հրատարակելու իր հռչակաւոր քեռւոյ՝ պրոֆեսոր Այվազեանի գեղարուեստական պատկերների fac simile օլէօգրաֆիկական արտատիպերը (снимки), որոնց երկուսը, այն է՝ Х. Колумбъ на пути въ Америку և Торжественное вступленіе Колумба на о. Сансальвадоръ, ինչպէս խոստանում է յարգելի հրատարակիչը, լոյս կը տեսնեն ներկայ տարուս, օգոստոս ամսին։

Պէտք է ասել, որ ես բաղդաւորութիւն ունեցայ մի քանի անգամ անձամբ յաճախելու մեր հայազն նկարչի պատկերների վերջին աշխարհահանդէսը, որ սկսեալ անցեալ տարու նոյեմբերի 28-ից, երկու ամիս շարունակ բաց էր մայրաքաղաքիս բոլոր հասարակութեան համար և արդէն կազմել էի տեսածիս մի համառօտ նկարագրութիւնը «Մշակին» ուղարկելու. բայց տարտաղդաբար, մինչև այսօր չը յաջողվեցաւ ինձ կատարել իմ դիտաւորութիւնս։ Այժմ պ. Մազիրեանցի գովելի ձեռնարկութիւնը առիթ է տալիս ինձ ծրարել, վերջապէս, մի կողմ իմ դանդաղութիւնս և գրիչ վերցնել. սակայն ուշանալուս պատճառը դանդաղութեամբ մեկնել — մտերմութիւն չէ. այսպէս խօսել-նշանակում է ճշմարտութեան դէմ մեղանչել, ուստի հրապարակօրէն խոստովանվում եմ, որ միայն համեստ երկիւղածութիւնն է, որ, այսպիսի ծանր գործառնութեան սկզբում, զինաթափ էր անում ինձ։ Կամենալով հաղորդել «Մշակի» ընթերցողներին իմ անձնական տպաւորութիւնները վերջացած աշխարհահանդիսի վերաբերութեամբ և ըստ կարողութեան չափ տալ մի քանի տեղեկութիւններ վերոյիշեալ երկու պատկան պատկերների մասին, որոնց օլէօգրաֆիան կովկասցիներից շատերը, գուցէ, կը տեսնեն օգոստոսին, ես ոչ միայն չեմ յանդգնի խորհնացու նման ասելու «միայն թէ և շնորհակալ ոք մերոցս գտանիցի լեալ աշխատութեանց» այլ և խոնարհաբար կը խնդրեմ մեր հայ հասարակութեանը ներողամիտ լինել դէպի իմ տկար այժերս։

Այցելելով պրոֆեսոր Այվազեանի պատկերների աշխարհահանդէսը և հիանալով նրա սքանչելի արտադրութեանց վրա, որոնք միանգամայն ապշեցնում են զննողին, որչափ իրանց բանասեղծական գեղեցկութեամբ ու տեխնիկական կատարելութեամբ, նոյնչափ և ճշգրիտ կենդանութեամբ, մարդս ակամայ պիտի բացականչէ՝ չը կայ, և երբէք չէ եղել ոչ թէ Ռուսիայում, այլ և բոլոր Եւրոպայում այնպիսի մի նկարիչ, որ իր կեանքի ընթացքում գրէր այնքան շատ պատկերներ, ինչքան Այվազեանը և որ մի և նոյն ժամանակ նրանց բոլորն էլ ներ, այնպէս, ինչպէս դրանք տպաւորված են նրա վերին աստիճանի նուրբ հոգու մէջ. նա զգում է և ըմբռնում է բնութիւնը ուժգնաբար, խորունկութեամբ. նա խորասոյզ է լինում սրա հրապուրանաց մէջ իր բոլոր էութեամբ և յետոյ շնորհիւ իր զարմանալի յիշողութեան, վրձնի միջնորդութեամբ յանձնում է իր տպաւորութիւնները կտաւին պարզ անկեղծութեամբ, առանց երկար ձգձգելու։ Ահա դոյն անկեղծութեան մէջն է կայանում նրա գերահռչակ հանճարի բոլոր այժը, նրա ահագին, գրեթէ, անօրինակ ժողովրդականութիւնը, որ մի քանի տասնեակ տարիներից յետոյ էլ հեռու տարածված է Ռուսիայի սահմաններից դուրս, իսկ կէս դարու ժամանակամիջոցում անխոնջ վստակով մշակած արուեստականութիւնը նրան կարողութիւն է տալիս, ինչպէս վերը յիշեցի, հեշտութեամբ մի առ մի դրոշմել կտաւի երեսին իր զգացած տպաւորութեանց մանրամասնութիւններ։

Դիտողութեան արժանի է այն իրողութիւնը որ աշխարհահռչակ մարինիստը *) ծնաւ և անուանի դարձաւ այն ժողովրդեան մէջ, որի համար ծովը ոչինչ նշանակութիւն ունեցող տարր է. ծովերը կից են միայն Ռուսիայի հեռաւորագոյն կողմերին, որոնք նուաճված են ընդամենը 100 կամ 150 տարի դրանից առաջ. բնական է, որ ռուս ժողովուրդը, մինչև անգամ մեր օրերում, չէ թէ տէր, այլ հիւր է դեռևս Բալտեան և Սև ծովի ափերում։ Զուսենալով իր ազգային բանաստեղծութեան մէջ առձեռն, պատրաստ տի-

*) Ծովային տեսարաններ նկարող։

Կաթողիկոսին ամենացաւալի և անակնկալ հիւանդութեան և Էջմիածնի վանդալից կացութեան վերայ, վասն զի Կաթողիկոսին հիւանդութիւնն, եթէ ստոյգ է, առաւել վնասակար է ազգին՝ քան թէ նրա վախճանումը:"

„Դարձեալ կասեմք, եթէ ստոյգ են այս տեղեկութիւնք, ազգը պարտի աճապարել ապահովելու Էջմիածնայ Կաթողիկոսութեան վարչական գործոց վիճակը, վասն զի Էջմիածնի բոլոր իրաւունքները կրնան վանդալ հանդիպիլ և այնուհետև ազգին ամեն ջանքն ու աշխատութիւնք կարող չը լինին եղած վնասները դարմանելու":

Եւ մեք կաւելցնեմք ըսել՝ գոգցես բնութիւն դարձեր է մեզի որ և է ծագելիք վնասէ կամ փոանդէ առաջ անտարբեր մընալ, ամենկերպ նախատեսութեան, զգուշութեան խորհրդոց և անկեղծ դիտողութեանց կարևորութեան չը տալ, և երբ ոմանց կողմէ նախատեսեալ վնասը կամ փոանդն յառաջ գայ, այն ատեն յուզիլ, իրար անցնիլ և բարձրագոչ գոռում գոչումներով ու աղաղակներով օդը թնդացնել:

Գուցէ ծանր թուին մեր այս մի քանի տողերը, բայց զմեզ մեղադրելու իրաւունք չունին, զի մեր դիտել տուած կէտը բացայայտ իրողութիւն մ՝ է փորձառութեան վրայ հիմնեալ է, և երբ իրողութիւնը կը խօսի, կանխակալ կարծիքներ պէտք է լռեն:

Ո՞վ գիտէ թէ Մանկունի եպիսկոպոս ինչեր չէ գործեր՝ որք դեռ ծածկուած կը մնան և Ազգին (պաշտօնական մարմնոց) թուլութենէն խրախուսեալ՝ տակաւին ինչեր պիտի չընէ և ինչ դերեր չը պիտի խաղայ Ազգին գլխուն:

Մեք իբրև հրապարակի մարդ՝ ազգային սոյն կենսական խնդրոյն նկատմամբ Լոյսի մէջ մեր կարծիքն հրապարակաւ յայտնելը բաւական չը համարելով՝ որոշած եմք Ազգ-ածողովոյ մէջ ալ հարցում ուղղել առ Ազգային Վարչութիւնն, բացատրութիւն խնդրելու համար թէ ինչ ըրած է այս մասին, ինչ կը խորհի, որպիսի տեղեկութիւններ ունի, և ինչ պիտի ընէ:

Ինչպէս որ կը պահանջէ մեր ազգային շահը, մեք այս մասին լռելէ չը պիտի դադրիմք, մինչև որ գործոց վիճակը պարզուի, օրինաւոր համարատուութիւն լինի և օրինաւոր հսկողութիւն ի գործ դրուի, որովհետև Էջմիածնի Ս. Կաթողիկոսը թէպէտ Ազգին Ընդհանրական Կաթողիկոսն է, սակայն Ազգին առջև պատասխանատուութենէ ազատ չէ երբէք և չը կրնար լինիլ քանի որ Կաթողիկոսութիւնն Ազգինն է և միայն Ազգը բացարձակ տէր է ազգային ամենայն շահուց և իրաւանց, և հետևաբար Կաթողիկոս, Պատրիարք, Առաջնորդ, Վարդապետ, Քահանայ և Սարկաւագ ազգային—եկեղեցւոյ մէջ պաշտօնեաներ են, ազգային և եկեղեցւոյ նուիրական շահերն ու իրաւունքներն անվթար պահպանելու պաշտօն և պարտականութիւն ունին, և ոչ թէ ըստ հաճոյս գործելու և շարժելու ազատ են:

Այնպիսի բացարձակ ազատութիւն տրուած չէ և ոչ մէկուն, և հարկաւ չը կրնար տրուիլ, քանի որ այդ պաշտօնեաները մարդ են, որք կրնան սխալիլ, և հետևապէս Ազգին և Եկեղեցւոյ մեծ վնաս հասցնել՝ աղէկ ընելու նպատակաւ, որ անակնկալելի չէ:

(Լոյս)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» № 90-ի մէջ տպած Էջմիածնի պրոկուրորի նամակը բացատրութիւն է տալիս Էջմիածնի գումարների գործադրութեան մասին: Բայց զարմանալի է որ պ. պրոկուրորը իր նամակի մէջ յիշում է միայն 1866 և 1867 թուերի հաշիւները, իսկ հետևեալ տարիների գումարների մասին յայտնի չէ ինչի լռում է:

—

Հայերը զարմանալի մարդիկ են. գրվում են հայ լրագրին մայիսին, փոխանակ յունվարին, կամ մինչև անգամ նախընթաց տարվայ դեկտեմբերին գրվելու,—և յետոյ զժգոհ են, որ նրանց չեն ուղարկում ամբողջ տարվայ համարները ըստ կզբից: Եթէ կամենում էք ամբողջ տարվայ համարները ստանալ, պէտք է վաղօրօք գրվէք և ոչ թէ մայիսին գրվելով պահանջէք յունվարի համարները: Մենք «Մշակը» ճշմարիտ է արպում ենք փոքր ինչ աւելի քան թէ բաժանորդ ունենք, բայց չենք կարող յունվարին հոգով սրբով իմանալ որ մայիսին գրվողներ կը լինեն ամբողջ տարվայ համար: Բաժանորդների թվի աւելանալով, աւելացնում ենք և օրինակների թիւը, բայց այն բօպէից, երբ նոր բաժանորդներ ենք ստանում, և ոչ թէ առաջին համարից, որ նորից չարել ու տպել չենք կարող:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են: «Մասիսի» յօդուածը, որ արտատպվեցաւ «Մշակի» մէջ և որի նպատակն էր հաչիւ պահանջել Էջմիածնից, մեծ ներգործութիւն ունեցաւ այստեղի մի անձի վրա, որի մասին ակնարկութիւն կար, թէ նրան յանձնվում են Էջմիածնի փողերը Բօրսայում խաղալու համար: Այդ անձը որոնում է այժմ մի գրող, որպէս զի պատասխանի «Մասիս» լրագրին, անդադար կրկնելով թէ՝ ինչ փող, ինչ Էջմիածին, ինչ Կրեսոս, ոնտեղից, ոնը....»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը: «Այստեղի փոստատան մէջ զարմանալի քաներ են պատահում. փոստատան ծառայողները երբ մի գիրք են հանում որ ուրիշ քաղաքից է ստացված, փոխանակ տիրոջը յանձնելու այդ գիրքը, առանց այլ և այլութեան իրանց համար են պահում: Երբ նամակի ծրարից զգում են որ նրա մէջ ֆոտոգրաֆիական պատկեր կայ, բաց են անում նամակը և լուսանկարը իրանց համար են պահում: Ես կարող եմ այն տիկինների և պարոնների ազգանուններն ասել, որոնց անունով ուղարկված գրքերն ու լուսանկար պատկերները փոստատան ծառայողների մօտ մնացին, փոխանակ յանձված լինելու իրանց տէրերին: Եթէ փոստատան կառավարիչը համարձակվի հերքում գրել «Մշակին» այն ժամանակ ես կը յայտնեմ այն անձերի ազգանունները, որոնց սեփականութիւնը փոստը իրան է սեփականացրել: Քաղաքի շատ նշանաւոր մարդկանց հետ փոստատունը չէ համարձակվում այս տեսակ բաներ անել, այլ միջին դասակարգի մարդկանց հետ:»

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են: «Ապրիլի 4-ին Շամախի եկան երկու հոգի մխիթարական ընկերութեան քարոզիչներից, որոնցից մինը ամերիկացի էր և Թուրքերէն լեզու լաւ իմացող՝ իսկ միւսը Թիւրքիացի հայ պ. Գրիգորեան: Գալուց յետոյ մի քանի օր Գրիգորեան հայերէն քարոզների մի շարք սկսում է կարդալ հայ-բողոքականների ժողովարանում: Նրա քարոզները այնքան ճարտար և գրաւիչ են լինում որ ժողովարանը լցվում է ոչ թէ միայն հայ-բողոքականներով և հայ-լուսաւորչականներով, բայց և ռուս աստիճանաւորներից ոմանք և նրանց թուում քաղաքագլուխը ներկայ են գտնվում այդ քարոզներին: Մի անգամ ևս ամերիկացին քարոզեց Թուրքերէն լեզուով. քարոզին ներկայ էին և բազմաթիւ Թուրքեր: Քարոզիչները իրանց առենախօսութեան նիւթը թէև վերցնելով սուրբ գրքերից, առաւել իրական կեանքի մտաւոր և բարոյական պահանջների վրա էին խօսում: Մայիսի 11-ին պարոնները մեկնեցան քաղաքից»:

—

Ս. Պետերբուրգի լրագիրներում կարդում ենք պաշտօնական հերքումն այն լուրի, իբր թէ Գելֆման վիժել է երեխայէն: Բժշկների քննութենից երևում է որ նրա յղութիւնը շարունակում է իր բնական և կանոնաւոր զարգացումը: Պաշտօնական հաղորդութենից երևում է որ կալանաւորվածի հետ շատ լաւ են վարվում բանտի մէջ:

—

Լրագիրները հաղորդում են որ մայիսի 15-ին Ս. Պետերբուրգի քաղաքագլուխ ընտրվեցաւ Գրլազովն: Միւս կանդիդատները հրաժարվեցան քուէարկութենից:

—

Ցիչեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր, մայիսի 23-ին լինելու է Աշտարակում թատրոնում Թիւրքաց Հայաստանից այս օրերս վերադարձած պ. Թոխմախեանի դասախօսութիւնը հայերէն լեզուով «Թիւրքաց Հայաստանի» մասին: Պ. Թոխմախեան ցոյց կը տայ իր դասախօսութեան ժամանակ թէ Վանի կողմերի և թէ Գիւրինի հայերի գործած կերպասները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Նորերումս Մարսելի մէջ կոմունիստների մի ցոյց կատարվեցաւ Գեսսա Գելֆմանի մահուան պատիժը արգելելու նպատակով: Ինչպէս հաղորդում են լրագիրները, թէպէտ այդ նպատակով ժողովը արգելվեցաւ ֆրանսիական պոլիցիայից, բայց այնու ամենայնիւ կոմունիստների ցոյցը կայացաւ և աւելի մեծ չափեր ունէր, քան թէ նա նըկարագրված էր ֆրանսիական պաշտօնական հաղորդութիւնների մէջ: Զը նայելով պոլիցիայի արգելմանը, այն տան առաջ, որտեղ պէտք է կայանար այդ ժողովը, հաւաքվեցաւ մօտ 3,000 մարդ, որոնք սկսեցին կռուել պոլիցիայի հետ, այնպէս որ հարկաւոր եղաւ զօրքերի միջամտութիւնը: Այդ ցոյցին մասնակցողները մի քանի խումբերի բաժանվեցան, երբ եկաւ յայտնի Պաուլա Մինկ-կոմունիստ կինը և ամբոխի գլուխը անցաւ: Նրա առաջնորդութեամբ ամբոխը յեղափոխական աղաղակներով անցաւ քաղաքի մէջ: Հրապարակի վրա խումբերը նորից միացան և մի քանի անձինք սկսեցին

պարներ, որոնք կարողանային մաքչելի անել նրա համար այս անդադար շարժուն, միշտ գեղեցիկ տարրի հիանալի տեսքերը և արհաւիրքը, որոնցից շատ դարերի ընթացքում անընդհատ ոգևորվում էին ծովին ասընթեր երկիրների լաւագոյն բանաստեղծները, նա, ռուս ժողովուրդը, չէր կարող սիրել լայնատարած ծովը, իբրև իր հարազատ տարրը:

Բայց Այվազեանը, իր տաղանդի զօրութեամբ, հարկադրեց սիրել ծովը, ոչ միայն, նրանց, որոնք իրանց կեանքում բնաւ ծով չէին տեսել, այլ և նրանց, որոնք թէպէտ և տեսել էին, սակայն չէին իմանում ըմբռնելու դրա հրաշալի վայելչութիւնները: Լուսապայծառ գիշերի դիւթիչ հրապուրանքը, արփիանշոյլ արեգակի մայր մրոնելու չքեղութիւնը, մարդուս հոգու վրա ահ ու սարսափ ձգող ալեկոծութիւնը—ահա այն զգացմունքները, որոնք յատկապէս ոգևորում են մեր նկարչին և այն զգացմունքները, որոնք հաղորդվում են նրա պատկերների զննողներին: Ով որ գաղափար ունի այս պատկերների մասին, նրան խորթ չը պէտք է թուի, Սև ծովի վրա երբեմն շոգեկառքով ճանապարհորդների և մանաւանդ ճանապարհորդուհիների, երբ նրանք ջրերի մակերեսյթի վրա տեսնում են յանկարծ մի որ և իցէ գեղեցիկ լուսաւորութիւն, բացականչելը. «ոհ, ինչ հիանալի տեսարան է, երանի թէ այժմ Այվազեանը այստեղ լինէր. նա, անշուշտ, այս ամենը աքանչելի կերպով կը նկարէր»: Այնման ճշգութիւն և անկեղծութիւն—ահա ինչի մէջն է կայանում նրա զօրութիւնը, ահա որտեղ պէտք է որոնել նրա փառքի աղբիւրը, այն փառքի, որ ոչ թէ տարիների ընթացքով չէ նսեմանում, այլ քանի գնում տարածվելով աճում է զուգահաւասար նրա զարգացող և կատարելագործվող արուեստականութեան հետ:

45 տարի շարունակ վայելելով հասարակութեան սէրը, Այվազեանը մինչև այժմ էլ մնաց նրա համար իբրև ամենահամակրելի նկարիչ:

Ցառաջ քան մասնաւորելը խօսքս երկու վրայիչեալ մեծ պատկերների վրա, որոնք ներկայացնում են Ամերիկայի գիւտը, պարտ եմ համարում ասել, որ Այվազեանը իր ապագայ արտադրութեանց համար նիւթեր ժողովելու դիտաւորութեամբ նախ երկու տարի ճանապարհորդեց Իտալիայում և յետոյ իր սովորական, անընկճելի յամառութեամբ ձեռնամուխ եղաւ գործին: Նրա վրձինը, որ շատ էր աշխատել ծովային տեսարաններ նկարելիս, այս անգամ պահանջում էր աւելի լայն գործադրութիւն և մեր երևելի մարինիստը միտք յղանալով նոր ինն անջինջ յիշատակ թողնել գեղարուեստականութեան պատմութեան մէջ, ներգաշնակեց ովկիանոսի տարրական երևոյթները այն պերճ և յանդուգն նաւավարի անուան հետ, որ նոր աշխարհ գտնելով, պատճառ դարձաւ նոր դարագլխի հաստատման ազգերի պատմութեան շրջանում:

Այս պատկերները Х. Колумбъ на пути въ Америку և Торжественное вступленіе Колумба на о. Сансальвадоръ անուանի պատմական նշանակութիւն ունեն ոչ լոկ դրա համար, որ նիւթերը պատմական են կամ Կոլոմբոսի և նրա ուղեկիցների պատկերները ժամանակակից ընտիր պատկերներից են արտագրված, իսկ նաւերի արտաքին տեսքը ճիշդ մողէլներից, ոչ, այլ դրա համար, որ Այվազեանը ինքն զգացել է և քաջ ըմբռնել Կոլոմբոսի սրտի կսկիծը, ուրախութիւնը, կենդանի ներկերով նկարել է բոլոր սարսափելի խոչնդոտները, որոնց աչխարհահռչակ նաւավարը հանդիպում էր իր նաւագնացութեան միջոցին և այն անսասման և խորին հոգեմայլութիւնը, որ փայլում է նրա երեսին իր քաղցր նպատակին հասնելուց յետոյ: Ոչ մի ուրիշ գրաւոր նկարագրութիւն այնքան պարզ գաղափար չէր կարող տալ Կոլոմբոսի կատարած փառահեղ մեծագործութեան և կրած բազմաթիւ վտանգների մասին, որոնց դէմ վիճակված էր նրան անդադար մաքառելու: Առաջինը, յիշեալ երկու հսկայական պատկերներից, ներկայացնում է ամբոխված ծովը և ալեկոծութիւնը. ահագին կոհակները ոլորվելով պատկերի մի ծայրից դէպի միւսը, կարծես, պատրաստ են կուտէից դուրս ցայտելու. մայլ երկինքը պատած է մութ ամպերով. ովկիանոսը իր անյատակ խորութեամբ, անվերջ հորիզոնը, երկինքը մի անեղ դժոխային խառնուրդ են ձևացնում: Կոլոմբոսի Santa Maria նաւը այնքան յարմար յօրինված է պատկերի վրա, որ նա բոլոր տախտակամածով զննողի աչքին է ընկնում. ալիքների ուժգին հարուածը նրան սաստիկ խռնարհել է մի կողմ և ջրի փրփրով սրսկել. էլ մի բօպէ և նաւը կորցնելով իր հաւասարակշռութիւնը, անշուշտ, պիտի խորտակվի անդունդի մէջ, որ մի քանի հարիւր անմեղ զոհերի հետ կլանելու է և նաև գերահռչակ նաւավարի հիանալի գաղափարը: Տախտակամածին տիրել է կատարեալ տագնապ և ապատամբութիւն. նաւաստիները աշխատում են պինդ բռնվիլ չուաններից, որ չը գլորվին ջուրը, մի քանիսները անճարացած ընկած են, ուրիշները սրտմտութեամբ լի մերկացրած սրերով յարձակվում են Կոլոմբոսի վրա, որի բարձրահասակ և փառաւոր կերպարանքը արձանացած կանգնած է նաւի մի ծայրում. նա այդ միջոցին ցոյց է տալիս (նոցա) ձեռքով՝ ծածանվող դրօշակի վրա, ուր Փրկչի խաչելութիւնն է նկարված, որով, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Սպանիայի թագուհի Իզաբելլա Կաստիլեասը բարի ճանապարհ և յաջողութիւն մաղթեց Կոլոմբոսին: Ամենայն տեղ մահ և յուսահատութիւն է թագաւորում: Բայց սոյն իրողութեան մէջն էլ դարձեալ երևում է նկարչի բանաստեղծական հոգու նրբութիւնը. մինչև անգամ իր սիրեցեալ տարրի սարսափելի այլայլութեան մէջ նա գիտէ ընտրել միշտ գեղեցիկը ինչպէս, օրինակ այս լուսաւոր նշոյլը, որ ճեղքելով մըռայլ ամպերը, ընկնում է նաւի վրա և լուսաւորում է տախտակամածը և ալիքները, պատկերի վրա առաջին տեղն է բռնում. դա այնպիսի վարպետութեամբ նկարված է, որ այցելուներից շատերը, ցերեկով, սխալմամբ ընդունում էին նրան պատուհանից ներս մտնող արփիափայլ զբօսի տեղ. այս նշանը, կարծես, մի կերպ նախագուշակում էր, որ Կոլոմբոսի կորովի ոգին ուղղութեամբ Աստուծոյ յաղթող պիտի դուրս գայ մահի և յուսահատութեան անդնդից:

Երբէք Այվազեանը, ալեկոծեալ ծովը նկարելիս, դեռ չէր հասել այնքան կատարելագործուած

վրդովեցուցիչ ճառեր կարդալ։ Այդ ճառերի բովանդակութիւնը անկարելի է պատմել։ Այդ տեղ կարդացվեցաւ Բոշֆորի նամակը, որով նա հրաժարվում էր ժողովին նախագահելուց։ Պաուլա-Մինկ մի վրդովեցուցիչ ճառ կարդաց և, վերցնելով կարմիր դրօշակը, Մարսելեզ երգող ամբոխին առաջնորդեց դէպի ռուսաց հիւպատոսի տունը։ Ամբոխից մի մարդ առաջարկեց հիւպատոսին պատանդ վերցնել, բայց այդ առաջարկութիւնը չիրագործվեցաւ։

Փարիզի մէջ հաւատացած են, որ թիւրքիայի բողոքը Ցունիսի խնդրի վերաբերութեամբ Անգլիայի և Իտալիայի ազդեցութեան հետևանք է։ Իսկապէս դիպլոմատական շրջանների մէջ այդ բողոքին ոչինչ նշանակութիւն չեն տալիս։ Աւստրիան և Գերմանիան Ցունիսի խնդիրը վերջացած են համարում։ Ցունիսի թափառական ցեղերին առաջարկած խաղաղական պայմանները հետևեալներն են։ Նրանք պէտք է յանձնեն իրանց զէնքերը Ֆրանսիացիներին, պէտք է օգնեն Ֆրանսիական զօրքերի համար պաշարներ, ջօրներ և սայլեր գտնելուն։ Ֆրանսիացիները կը վերադարձնեն պատանդներին, ծերերին և կանանց, և նրանց կը թողնեն իրանց նախկին բնակութեան տեղը։

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ ընտրողական հարցի մասին վիճաբանութիւնների ժամանակ խօսողներից ոչ մէկը նոր բան չասաց։ Գամբետտայի ճառը $1\frac{1}{2}$ ժամ տևեց և, երբ վերջացաւ, ժողովը նրան գրեթէ միաձայն ծափահարեց։ Ի միջի այլոց նա ասաց. „Խնդրեմ հաւատացէք, որ ես չեմ մասնակցում վիճաբանութիւններին ինձ վրա բարձած մեղադրանքների դէմ բողոքելու համար։ Ցոյս ունեմ, որ ինձ հարկաւոր չէ արդարանալ ոչ ժողովի և ոչ երկրի առաջ այն դիտաւորութիւնների մասին, որոնց ինձ վերաբերում են և որոնք յանցաւոր կը լինէին, եթէ կատարելապէս անհիմն չը լինէին։ Ես նրանց յիշեցի, որպէս զի վերջ դնեմ այդպիսի խօսակցութիւններին, որոնք անվայել են հանրապետականների համար։ Ընտրողական ինչ տեսակ ձև էլ դուք ընտրէք, հաւատացէք, որ ես երբէք չեմ մասնակցի ընտրողական խնդրիզներին, որոնք անվայել են թէ ինձ համար և թէ իմ կուսակցութեան համար“։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Իշխան Բիսմարկի առաջարկած վարչական միջոցները Համբուրգ քաղաքը ստիպմամբ գերմանական մաքսային դաշնակցութեան մէջ մացնելու մասին նոյն անբաւականութիւնը յարուցեց պարլամենտի և միացեալ խորհուրդի մէջ, ինչ որ անցեալ տարի։ Նախկին մինիստր Դելբրիւկ առաջարկեց, որ մաքսային սահմանները կարելի է փոփոխել միայն օրէնքի համեմատ։ Առաջադէմները ոգևորեցին պաշտպանված առաջարկեցին պաշտպանել պարլամենտի և միացեալ պետութիւնների սահմանադրական իրաւունքները միացեալ խորհրդի կամայականութեան դէմ։

Ներկայումս պարլամենտը քննում է մի օրինագիծ արդիւնաբերական ընկերութիւնները վերականգնելու մասին։ Ազատամիտները մեծ դժուարութեամբ կարողացան մերժել օրինագծի այն յօդուածները, որոնք իրաւունք տալով ընկերութիւններին արհեստ սովորեցնել գործակատարներին, նրա պատակ ունէին այդ կրթութիւնը պարտադիր դարձնել։

Նորերումս հեռագիրը հաղորդեց կոմս Արնիմի մահուան լուրը, որ մի քանի ժամանակ վարում էր գերմանական դեսպանի պաշտօնը Փարիզի մէջ և որի դատաստանական գործը իր ժամանակին մեծ աղմուկ բարձրացրեց։ Ինչպէս յայտնի է, նա ենթարկված էր դատաստանին դիպլոմատիական գօրութիւններ ծածկելու համար և նրա բացակայութեամբ մեղադրվեցաւ պետական դաւաճանութեան մէջ իշխան Բիսմարկի առողջ հաղածանքների շնորհիւ։ Այնուհետև հանգուցեալը իր ամբողջ կեանքը աշխատում էր այդ մեղադրանքը մերժելու համար։ Նա թողել է մի քանի գրուածքներ, որոնք երևի կը հրատարակվեն։ Նորերումս գերմանական կայսերական դատարանը վճիռ կայացրեց կոմս Արնիմին թոյլ տալ ազատ մուտք ունենալ Գերմանիայի մէջ։ Այդ վճիռը և կոմս Արնիմի մահը գրեթէ միաժամանակ պատահեցան։

Իշխան Բիսմարկ նորերումս դարձեալ մի անաջողութիւն ունեցաւ գերմանական պարլամենտի մէջ, որ ձայների նշանաւոր մեծամասնութեամբ մերժեց նրա առաջարկած հարկը զարեջրի վրա։ Վիսբադենից վերադառնալուց յետոյ կայսր Վիլհելմ առանձին ուշադրութիւն է դարձնում զինուորական գործերի վրա։ Նա մտադիր է անձամբ զինուորական քննութիւնը կատարել, որ կը տևի մինչև յունիսի կէսը։

Գերմանական դեսպան կոմս Հայֆելդին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրութեան քարտուղար նշանակելու մասին տարածված լուրերը դադարել են և քաղաքական շրջանները կասկածում են, որ այդ լուրերը ճիշդ լինեն։ Կոմս Հայֆելդ վայելում է իշխան Բիսմարկի ուշադրութիւնը, որը նրան իր ամենաընդունակ աշխատակիցներից մէկն է համարում։ Կ. Պոլսից ստացված լուրերը միաձայն ապացուցանում են, որ երբէք ոչ մի դեսպան այնպիսի ազդեցութիւն չէ ունեցել սուլթանի վրա, ինչպէս կոմս Հայֆելդտ։ Այդ պատճառով թէ գերմանական կառավարութիւնը և թէ սուլթանը ցանկանում են, որ կոմս Հայֆելդտ որքան կարելի է շատ ժամանակ մնայ Կ. Պոլսի մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գիտութեան նպաստող ֆրանսիական ընկերութիւնը, իր 10-երորդ ժողովը ունի այս տարի Ալժիրիայում։ Մօտ 1,500 անձինք ցանկութիւն են յայտնել մասնակցել այդ ժողովին և նայելով յայտարարութեան պրոգրամին ժողովը շատ հետաքրքիր է լինելու։ Օտար հիւրերից ներկայ գտնվելու են Հռոմի օբսէրվատորիայի դիրեկտոր Տակինի, պ. պ. Սիմէնս, Ուլիամ, Տօմսոն, Մէնդելէեվ, Մաքիուս, Վէնիւկով, Գլադստոն, Ֆոխտ, Ադամս և շատ ուրիշներ։ Նիստերը բաց են ազատվից։

* * *

Ամերիկայի հանճարի նշանաբանը ինչպէս երևում է մեքենաներ հնարելն է։ «La Nature» լրագրի մէջ գտնում ենք ձի մաքրելու մի նոր մեքենայի նկարագրութիւն։ Այդ մեքենան շատ նման է այն մեքենային, որ գործ են ածում պարիկմախերները մազերը խատակելու համար։ Այդ գործիքի շարժողութեան արագութիւնը հասնում է մի րոպէում 500 պտոյտի։

* * *

Այս օրերս Փարիզում յայտարարվեցաւ օրիորդ Հիներիէտտա Պուստօվոյտովի մահվան մասին, որ լեհական ապստամբութեան ժամանակ երևելի յեղափոխական Լանգէվիչի ադիւտանտի պաշտօն էր վարել։ Օրիորդ Պուստօվոյտով պատկանում էր յայտնի ընտանիքին և 1863 թ-ի լեհական ապստամբութեան ժամանակ նա տղամարդու շորերով, իբրև Լանգէվիչի ադիւտանտ, ամեն տեղ ձիով հետևում էր նրան։ Երբ ապստամբութիւնը ճնշվեցաւ, նա անհետացաւ և մինչև այժմ ոչոք ոչինչ չը գիտէր նրա մասին. մահվան յայտարարութիւնից միայն իմացվեցաւ որ նա մինչև այժմ կենդանի էր և բնակվում էր Փարիզում։

* * *

Հիւսիսային Ամերիկայի նահանգներում մի մասնաւոր անձ 10,000 դոլլար պրէմիա էր նշանակել ամենագեղեցիկ կնոջ համար, որի գեղեցկութիւնը կորոշի դրա համար կազմված առանձին մասնաժողով։ Բոլոր կանանցից ամենագեղեցիկը գտնվեցաւ Նիւ-Իորկում, Լուիզա Մօնտան, որը և ստացաւ մրցանակը։ Դա գերասանուհի էր մի գաւառական քաղաքում, խումբի հետ միասին շրջել էր ամբողջ Միացեալ-Նահանգները և վերջը պակվել էր մի գերասանի հետ, բայց պակը քանդվեցաւ, որովհետև գեղեցկուհու մարդը ծախել էր նրան մի հարուստ թղթախաղացին 60 դոլլարով։ Լուիզա Մօնտան մի բարձրահասակ, գեղեցիկ կազմված կին է, նրա մազերը սաթի պէս սև են, աչքերը կապոյտ, երկար, սև խիտ թերթերունքներով, և նոյնպէս սև, խիտ յօնքերով, երեսի գոյնը մարմարիոնի պէս սպիտակ է, այնպէս որ նա իրաւ կարող է համարվել ամենագեղեցիկ կին և իզուր չէ նրա ստացած պրէմիան։

* * *

Այս օրերս Ադէլինա Պատտի, ուղևորվելով դէպի իր կալուածքը, կը մնայ մի քանի օր Լոնդոնում և մայիսի 21-ին բեմ դուրս կը գայ Սէմիրամիդի դերի մէջ։ Լսվում է որ Պատտի մի տարուց յետոյ բեմը բոլորովին թողնելու է, բայց այդ քայլը անելուց առաջ նա դիտաւորութիւն ունի այցելել բոլոր եւրոպական մայրաքաղաքները մի մի հրաժարական ներկայացում տալով և վերջը Սարա Բէրնարի օրինակին հետևելով մի քանի ամիս կանցկացնի Ամերիկայում։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

թեան. ջրերի պարզութիւնը, շողշողուն ալիքների գեղեցկութիւնը հիանալի են, կոհակների նկարը և նրանց խաղալը աննման են. մի կողմ խոնարհված նաւի դիրքը, տախտակամածով դէպի հանդիսականները այնպիսի տեխնիկական դժուարութիւններ է մատուցանում, որոնց յաղթել կարող էր միայն Այվազեանի տաղանդը։ Ցարաբաղդաբար Կոլոմբոսի և նրա ուղեկիցների կերպարանքները շատ փոքր են և լաւ չեն մշակված. բայց մեղադրել դրա համար նկարչին չէ կարելի, վասն զի նա իբրև մարինիստ, պատմական նիւթերից նախապատ է համարել ովկիանոսը։

Միւս մեծ պատկերի վրա նկարված է Կոլոմբոսի ցամաք դուրս գալը Սանսալվադոր կղզում. այս պատկերը աւելի յարմար կը լինէր կոչել «Կոլոմբոսի յաղթանակ»։ Խաղաղ ովկիանոսը լուսաւորված է նոր ծագող արեգակով, որի հրակէզ ճառագայթները թափ անցնում են չքեղ արմաւենի անտառի միջով, ժայռատ ափերի վրա և լուսաւորում են ամբողջ պատկերը մի սքանչելի, թարմ և ճիշդ հարաւային երկիրներին միայն յատուկ վարդի գոյներով. հեռու հորիզոնի վրա անհետանում են առաւօտեան վերջին ամպերը։ Պատկերի ձախ կողմում դէպի վեր բարձրացող ապառաժը, որ ծածկված է խիտ, կուսական անտառներով, այն աւետաց երկիրն է, որ այսքան անտեսի ձախորդութիւններից յետոյ արժանացաւ, վերջապես, տեսնել երևելի նաւավարը, ուրբաթ օրը հոկտեմբերի 12-ին, 1492 թ. և կոչեց նրան Սան-Սալվադոր։ *) Ահա ափին մօտենում են երկու նաւակները, որոնք լի են Կոլոմբոսի ընկերակիցներով. նա ինքն յառաջ քան ցամաք կոխելը, քաղցր երանութեամբ աչքերը դարձնում է դէպի երկինք. նրա երիտասարդ, բայց արդէն վաղաժամանակ ալեօք զարդարված երեսի վրա, կարծես, գրված լինի անսահման գոհութիւն նախախնամութեան, որ առաջինը ներշնչել է նրան նոր աշխարհ որոնելու միտքը և օգնել է իրագործելու այն։ Նաւատաները, թերես նոքա, որոնք երբեմն, ահի և յուսահատութեան ազդեցութեան ներքոյ, կամենում էին ըստանել նորան, այժմ խոնարհված ոտերն են համբուրում. մի գոմինիկեան երէց, փրկչի խաչելութիւնը ձեռքին, օրհնում է նոր աշխարհի սահմանը։ Հեռուից երևում են Կոլոմբոսի երեք նաւերը, որոնք խարիսխ են ձգել ծովը. ովկիանոսի թափանցիկ ջրերը, ուր այս նաւերը նշմարվում են ինչպէս հայելու մէջ, պարզ կապոյտ երկինքը, շնորհալի ընութեան հարստա բուսականութիւնը, չքեղազարդ զգեստներով մարդիկը, որոնք պատրաստվում են արդէն ցամաք իջնելու, երկար և վտանգաւոր նաւագնացութիւնից յետոյ, այս ամենը մի սքանչելի ներդաշնակութեամբ ամփոփված է տաղանդաւոր նկարչի գեղեցիկ պատկերի վրա։ Ցնսարանի չքեղութիւնը լրացնելու համար ծովի եզերքին կանգնած են անտառի խոշոր ծառերից դուրս պրծած տեղացի վայրենիները, իսկ մի հնդիկ շուտափոյթ թիավարելով, իր մակոյկը ուղղում է դէպի ափը, նորա՝ նորեկների կողմը՝ դարձրած երեսը արտայայտում է զարմանք և ապշութիւն։

Պատկերի ensemble-ը այնքան գեղեցիկ է և սիրուն, որ դժուար թէ կարելի լինի նկատել նորա վրա մասնաւոր թերութիւններ։ Նաւերը, ինչպէս ասեցի, նկարված են XV դարուց պահպանված լաւագոյն մոդէլներից և այնքան ընտիր են, որ կարող էին պատիւ բերել պատմական նկարչին։ Կոլոմբոսի, նորա ուղեկիցների կերպարանքը, առարկաների լուսաւորութիւն և առհասարակ բոլոր մանրամասնութիւնները մշակված են այնպիսի վեհ ճարտարութեամբ, որ պատկերը պէտք է համարել կատարեալ կլասսիական. իր նմանը նա չունի ուրիշ տեղ։ Մինչդեռ ես այս տողերը գրում եմ, Լոնդոնում, անդլիացոց հասարակութիւնը խուռն բազմութեամբ յաճախում է Այվազեանի աշխարհահանդէսը, որ Ռուսիայից տեղափոխվեցաւ Անգլիա։ Նորերումս լսեցի թէ անդլիացիք 30,000 ռուբլի են առաջարկում մեր հայաղն նկարչին, նորա Торжественное вступленіе Колумба на о. Сан-сальвадоръ պատկերի համար. բայց նա առաջ կամենում է Ամերիկա տանել և յետոյ ծախել։

Եթէ ես հաւատացած լինէի թէ՝ իմ թոյլ գրչով կարողացայ գէթ մի փոքր գաղափար տալ մեր հասարակութեան Այվազեանի տաղանդի և գեղարուեստական արտադրութեանց մասին, ես ինձ բարոյապէս վարձատրված կը համարէի. սակայն կարծում եմ որ մօտ ապագայումս հասարակութիւնը ինքն էլ աւելի կատեանայ անձամբ տուգելու առաձները. վասն զի տարակոյս չը կայ, որ երբ օգոստոսին պ. Մազիրեանցը լոյս կընծայէ մի քանի պատկերներ, մեր կովկասցի եղբայրները պարծանք կը համարեն զարդարել իրանց առանձնասենեակները և դահլիճները հայաղն երևելի նկարչի հիանալի պատկերներով։ Վերջիններիս գները չափազանց մատչելի են. ցանկալի կը լինէր որ Հայոց ուսումնարաններումն էլ գտնվէին մի քանի հատերը. . . վասն զի եթէ Վարդան Մամիկոնեանի լուսանկարը կարող է ազգասիրութեամբ ոգևորել հայ մանուկներին, Այվազեանի պատկերները, իբրև կենդանի օրինակ հայկական հանճարի և ընդունակութեան, ոչ սակաւ էսթէտիկական նուրբ ճաշակ կը զարգացնեն նոցա մէջ և հաւատ կը ներշնչեն նրանց դէպի իրանց յատուկ այժերը. հայ պատանին պիտի ճանաչէ վերջապէս իր ազգի բնական ձիրքերը և վայելելով մասամբ մեր ժամանակակից մեծանուն հայրենակիցների ժառանգած փառքը, նա պիտի ընտելանայ նայել նոցա վրա ոչ իբրև բացառական, այլ իբրև հայոց համար սովորական երևոյթների վրա. երբ այսպիսի կարծիք կը հաստատվի մեր մէջ, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք համարձակ նայելու ապագայի վրա։

Անձամբ խմանալով մեծ պ. Մազիրեանցի ազգասէր եռանդը, քաջալոյս եմ, որ նա կը բարեհաճէ զիջումն անել հայոց դպրոցներին յայտարարութեան մէջ որոշված գներից։ Ի բոլոր սրտէ աղօթութիւն եմ մաղթում յարգելի հրատարակչին նորա գեղեցիկ ձեռնարկութեան մէջ։

Ս. Պետերբուրգ. Խ. Ենգիբարեան

---

*) Սբ. փրկութիւն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին՝ **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Ջոնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաշոկոլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդէսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կոնֆեկտներ հագի դէմ 60 կ. ֆունտը։ 78—100

Թիֆլիսի Հայոց Ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի	22 և 23-ին	կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.	
„	25-ից—30-ը	Հալլաբարի Մարիամեան օր. ուսումն.	
„	28 և 29-ին	կուկիս Թանդոյեան օր. ուսումն.	
„	30-ին „	Հալլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.	
Յունիսի	1 և 2-ին	կուկիս Ս. Աստուածածին եկ. ուսումն.	
„	3 և 4-ին	Զզրաշէն եկ. ուսումնարաններում.	
„	5-ին „	Շամքոռեցոց եկ. ուսումնարանում.	
„	6-ին „	Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.	
„	8-ին „	Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.	
„	9-ին „	Զուղուբէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում.	

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

ՊՐՕՖԵՍՕՐ

Յ. Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ

Գեղարուեստական պատկերները արդէն վաղուց է որ համաշխարհական անուն են ստացել և զարդարում են ռուս և օտարազգի մեծատունների շքեղ սալօնները և պատկերական գալերէյները, բայց հասարակութեան մեծագոյն մասին համար դոքա իւրեանց թանգութեան պատճառով բոլորովին անմատչելի են։

Չիջանելով իւր տաղանդի բազմաթիւ պատուողներին, որոնք արժան գնով ցանկանում են ունենալ նորա պատկերների ճիշդ արտատիպը, պրոֆեսօր Այվազովսքին ինձ բացառական իրաւունք տուաւ հրատարակել իւր ամենաերևելի պատկերներուն ԻԻՂԱՏԻՊ (OLEOGRAPHIE) ԱՐՏԱՏԻՊՆԵՐԸ (FACSIMILE) այն անհրաժեշտ պայմանով, որ հրատարակութիւնը լինի կատարեալ գեղարուեստական գործ։

Մտադիր լինելով հրատարակել մի շարք պ. Այվազովսքու հռչակաւոր պատկերների, ես ներկայ ժամանակս ձեռնամուխ եղայ փորձի համար արտատպել նորա վերջի պատմական պատկերները. Խ. ԿՕԼՈՒՄԲ ՃԱՆԱՊԱՐՀՈՒՄ ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱՑ (ալեկոծութիւն ովկիանոսի վերայ) և ԿՕԼՈՒՄԲԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՅԱՄԱՔ ԻՋՆԵԼԸ ՍԱՆ-ՍԱԼՎԱԴՈՐ ԿՂԶՈՒՄ (արեգակի ծագումը)։ Երկու պատկերներն էլ երկայնութեամբ մի արշին ($70^1/_2$ sentim.) և լայնութեամբ 12 վերշոկ ($52^1/_2$ seintm.) արտատպվում են Բերլինում Շտեյնբօկի երևելի գործարանում և լոյս կը տեսնեն ներկայ տարուս օգոստոսին։

Որովհետև օլեոգրաֆիկական պատկերների քանակութիւնը ճիշդ գեղարուեստական արտատիպ ստանալու նպատակով խստիւ սահմանափակված է, ուստի ցանկացողք կարող են կանխիկ ստորագրուիլ դիմելով ինձ հետևեալ հասցէով՝ *С. Петербургъ, Владимірская ул. д. № 15 кв. 8 Леониду Егоровичу Мазирову.* Երկու պատկերներին ստորագրողները ճանապարհածախսով հանդերձ վճարում են 28 ռուբ., իսկ մի հատին 17 ռուբ. փողը կարելի է ուղարկել մասամբ, բայց յառաջ քան բոլոր գումարի լրումն պատկերները չեն ուղարկուի։

Օլեոգրաֆիկական պատկերները պիտի ուղարկվեն կտաւի վրայ քաշած պատեր զարդարելու համար, կամ բրիստոլեան թղթի վրայ ալբոմների համար, ուստի ստորագրողները թո՛ղ բարեհաճեն յայտնելու կտաւի թէ թղթի վրայ ցանկանում են ստանալ յիշեալ պատկերները։ Պատկերների համար պատրաստվում են շքեղ շրջանակներ զանազան արժանաւորութեամբ և կուղարկվին ստորագրվողներուն ըստ նոցա պահանջման ամենամատչելի գնով։

Տաճկաստանցիք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ *S.-Pétersbourg, rue Wladimirsky № 15 Mr. L. Maziroff*, ուղարկելով մէկ պատկերի համար 50 ֆրանկ, իսկ երկուսին միասին 80 ֆր.

Հրատարակիչ Լ. ՄԱԶԻՐԵԱՆՑ

2—3

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հաճեմատեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ			ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	ֆ. 3 ր.

83—100

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Սի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչափ դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։ 70—100

---

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (սթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

4—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անունով վիպասանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահսեսի-Ցախոբեանցի տպարանը։ ԲԱԳՈՒ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 բուբլի վճարել կարելի է։

1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, Կարլ Կարլովիչ Կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ։

2) Վիկտոր Ալէքսանդրովիչ Դինդելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշեվի տանը, Սօլդատսկի բազարի վրա։

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ։

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Բրունսի մօտ։ Միխայելովսկայա փողոցի վրա, ռուսական մագազինում։

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բոզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է 1 բուբլ 20 կոպ.։

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԱԿԻ ՄԷՋ, ԵՐԵՎԱՆՍԿԱՅԱ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ, Զակելու տանը բացված է ստորագրութիւն յօգուտ 'ի տէր Հանգուցեալ կայսր Ալէքսանդր II-ի ՈՐԲԱՆՈՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ։

5—15

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ. Ալֆոնս Դոդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
2). Պօղնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան։ . . . . . 20 կ.
3). Պապապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.
4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Աւցախեցի . . . . . 30 կ.
5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի։ . . . . . 15 կ.
6). Տնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան։ . . . 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Քնար խօսնակից“ որի համար առանձին կարելի է ստորագրել և մնացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Ց. Նազարեան։

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ։

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջումն կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань А. Гуламирянцу

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ

ծախվում է արտասահմանի շօլանդիական **ՑԵՄԵՆՏ** փօթիի մէջ էլիսբար **ԲԱԲԱԼՕՎ**ի մօտ, Քութայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎ**ի մօտ։ Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիօնսկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**։

ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ

1—11 (2)

Дозволено цензурою, Тифлисъ. 22 Мая 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.